ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/127

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց ընթացակարգ, բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.07.2019թ. թիվ 26/26-1/12722-2019 գրությամբ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1367-2019 գրության հիման վրա, 30.07.2019թ.-ին «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 30.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 08.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 08.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.08.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1367-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և վերջինս armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է ներկայացնելու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սակայն Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի կողմից ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները որոշեց մերժել Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի հայտը 16-րդ չափաբաժնի մասով:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով գնման

ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.08.2019թ.-ին գրությամբ դիմել է «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2019թ. թիվ 26/26-1/12722-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով 16.05.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց Ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներակայացրել նաև «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ն:

Մասնակիցը թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց Ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի

համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

«Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.06.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ն ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը armeps.am համակարգի՝ ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 11.07.2019թ.-ին ուղարկվել է Մասնակցի muradyan_sanasar@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Գնահատող հանձնաժողովի 19.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ի հայտը ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով մերժվել է, քանի որ վերջինիս կողմից ապրանքների ամբողջական նկարագրերը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 30.07.2019թ. թիվ 26/26-1/12722-2019 գրությամբ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի.

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ընդհանրապես չեն ներկայացվում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ապա տվյալ դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով 16.05.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ն ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը armeps.am համակարգի՝ ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 11.07.2019թ.-ին ուղարկվել է Մասնակցի muradyan_sanasar@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Գնահատող հանձնաժողովի 19.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ի հայտը ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով մերժվել է, քանի որ վերջինիս կողմից ապրանքների ամբողջական նկարագրերը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխա-

նության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չներկայացնելով հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2019թ. թիվ 26/26-1/12722-2019 գրությամբ «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Սանասար Ավագի Մուրադյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**